ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2022 թվականի փետրվարի 8-ի N 8 - 1 որոշմամբ
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

_____ Դ. Գալոյան

8 փետրվարի 2022 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներկա վիճակը և ներքին ու արտաքին միտումները	**3**
Ներառական կրթություն. հիմնական նպատակներն ու խնդիրները	3
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ներառական կրթության համակարգի ներկա վիճակը	5
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ներառական կրթության համակարգի զարգացման ընդհանուր ուղղությունները	**6**
Ներառական կրթության համակարգի ձևավորման առաջին փուլը (2022-2024)	6
Ներառական կրթության հարցերի համակարգումը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում	7
Վարչական, դասախոսական և օժանդակ կազմի վերապատրաստման ծրագիր	9
Ուսանողների հետ աշխատանքի ծրագիր	10

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հայեցակարգը նպատակ ունի ուրվագծելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ներառական կրթության զարգացման ռազմավարությունը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում՝ հիմք ունենալով համալսարանի զարգացումը և հասարակական առաջընթացի միտումները:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գլոբալ մակարդակում բարձրագույն կրթության ընդգրկումն աճել է ինչպես բացարձակ թվերով, այնպես էլ որպես բնակչության տոկոս: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ՏՀԶԿ երկրներում բարձրագույն կրթության մասնակցությունը գրեթե կրկնապատկվել է (20%-ից մինչև 36%), իսկ ՏՀԶԿ երկրների մոտավորապես կեսում բարձրագույն կրթությունն այժմ կրթության ամենատարածված մակարդակն է:

Հայաստանում նույնպես անկախության շրջանում արձանագրվել է բարձրագույն կրթության ծրագրեր իրականացնող հաստատությունների և դրանցում ընդգրկված ուսանողների շեշտակի աճ. այժմ միայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության ներքո գործող բուհերում սովորում է շուրջ 85 հազար ուսանող:

Ընդհանուր մասնակցության աճին զուգահեռ, սոցիալական ներառման համար առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող խմբերի ուսանողների ներկայացվածության աստիճանը բարձրագույն կրթության համակարգում զգալիորեն ցածր է, քան հասարակության մեջ, ինչը մասամբ պայմանավորված է նաև բուհերում ուսանողների աջակցության ծառայությունների և մատչելի ենթակառուցվածքների բացակայությամբ, ինչպես նաև սոցիալական ներառման մշակույթի անբավարար մակարդակով:

Այդ հիմնական խմբերն են՝

- ցածր կամ միջին եկամուտներ ունեցող ընտանիքների զավակները,

- ոչ բարձր կրթական մակարդակ ունեցող ծնողների զավակները,
- հաշմանդամություն ունեցող երիտասարդները,
- պատերազմի մասնակիցները,
- մեծահասակ ուսանողները,
- երեխաների, հիվանդ հարազատների խնամքի պարտականություններ ունեցող ուսանողներն ու աշխատակիցները,
- միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ ուսանողները,
- էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները,
- հեռավոր կամ գյուղական վայրերից, քաղաքային խնդրահարույց գոտիներից, հանրային ծառայությունների (օրինակ՝ տրանսպորտային) ոչ բավարար մակարդակ ունեցող տարածքներից ուսանողները,
- փախստականները:

Ի տարբերություն հասարակական այլ ոլորտների, ներառական մշակույթի առկայությունը և վերը նշված խմբերին պատկանող ուսանողների համար բարձրագույն կրթության գրավչությունը մեծապես պայմանավորված է բոլորի համար արդյունավետ ուսումնառության ստեղծված պայմաններով, առաջին հերթին՝ կրթական ծրագրերում և դասընթացներում դասավանդման այնպիսի մեթոդների, ուսումնառության ձևերի և գնահատման եղանակների մշակմամբ, որոնք կկարողանան ապահովել՝

- նախընթաց գիտելիքի տարբերությունների վերացումը (օրինակ՝ կրթական նախորդ աստիճանում առաջադիմության տարբերությունների),
- նախընթաց փորձառության տարբերությունների համահարթեցումը (օրինակ՝ աշխատանքային փորձ ունեցող մեծահասակ ուսանողները կարիք են ունենում ուսումնառության այնպիսի մոտեցումների, որոնք տարբեր են անմիջապես դպրոցական նստարանից բուհ ընդունված ուսանողների կարիքներից, նրանք նաև կարող են գործնական ներդրում ունենալ դասընթացի ընթացքում),
- այնպիսի խնդիրների լուծումը, որոնք կապված են ներառականությանը վերաբերող կարծրատիպերի վերացմանը (օրինակ՝ հաշմանդամության, մշակույթների և կրոնների մասին),
- ճկուն ուսումնառության հետագծեր, այդ թվում՝ մասնակի բեռնվածությամբ ուսումնառելու կամ կենատև կրթության համալսարանական համակարգի հնարավորություններն օգտագործելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Ներառական կրթության զարգացման համատեքստում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում առկա են հետևյալ մարտահրավերները՝

- բուհի շենքերն ու ենթակառուցվածքներն ամբողջությամբ հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար,
- կրթական ծրագրերը դեռևս համապատասխանեցված չեն ուսումնառության համապիտանի մշակման (Universal Design for Learning – UDL) սկզբունքերին,
- վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի գերակշիռ մասը վերապատրաստված չէ, չունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ աշխատելու համապատասխան հմտություններ,
- և այլն:

Ներկայում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կիրառվում են բարձրագույն կրթության մեջ ներառվածությանն աջակցելու որոշ հանգուցատարրեր (օրինակ՝ զեղչերը, նպաստները, ուսանողներին՝ իրենց կրթության ֆինանսավորման հարցում օժանդակելու այնպիսի լրացուցիչ գործիքներ, ինչպիսիք են մասնավճարով կամ տարաժամկետ, հետաձգված վճարումների, վարկերի, աշխատանք-կրթություն ծրագրերը և այլն), որոնց գործառությունը պայմանավորող առկա ընթացակարգերը և հատուկ ձեռնարկումները, սակայն, ներառական կրթության գործուն, տևակայուն և փոխկապակցված համակարգ չեն կազմում: Այդպիսի համակարգի ձևավորումը լուրջ հայեցակարգային մոտեցումների մշակում է պահանջում և չի կարող հենվել նկարագրված տարրերի մեխանիկական համակցման վրա առնվազն երկու պատճառով.

1) ներառական կրթության արդյունավետ մեխանիզմների մշակումը սերտորեն կապված է համալսարանական կրթության կազմակերպման այնպիսի կողմերի հետ, ինչպիսիք են կրթության բազմազանության, կրթական ծրագրերում ուսումնառության համապիտանի մշակման սկզբունքների կիրարկման ապահովումը, ակադեմիական ինքնավարության և պատասխանատվության, որակյալ կրթության մշակույթի շարունակական զարգացումը,

2) հենց այդպիսի համալիր մոտեցման բացակայությունն է, որ զգալիորեն ներազդում է ներառական կրթության առկա տարրերի արդյունավետության վրա, իսկ երբեմն նաև չեզոքացնում դրանց դերը կրթական գործընթացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներառական կրթության գործուն և համապարփակ համակարգ ձևավորելու նպատակադրությունը ենթադրում է տևական գործընթացի պլանավորում, որի շրջանակներում պետք է փուլ առ փուլ մշակվեն և գործարկվեն համակարգի բոլոր հենքային բաղադրիչները:

Ներառական կրթության համակարգի մշակման և ներդրման գործընթացի առաջին փուլի (2022-2024 թվականներ) հիմնական խնդիրն է ուսանողների և դասավանդող կազմի՝ ներառական կրթության գործընթացին առավելագույնս մասնակից դարձնելու մեխանիզմների ձևավորումը, ինչպես նաև ներառական կրթության համակարգի ներդրմանն ուղղված ծրագրերով իրազեկման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման ձևաչափի և ընթացակարգի մշակումը:

Ստորև տրվում են ներառական կրթության համակարգի մշակման և ներդրման հիմնական բնութագրերը առաջին փուլի համար:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ (2022-2024)

Ներառականության վերաբերյալ տարբեր համալսարանական ռազմավարությունների և մոտեցումների՝ Եվրոպական համալսարանների ընկերակցության ձեռնարկած հետազոտությունը[1] ցույց է տալիս, որ մի շարք համալսարանների համար հատկանշական է որոշակի խնդրի շեշտադրումից (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներառում, գենդերային հավասարության խթանում կամ փախստականների ինտեգրում) անցումը դեպի ավելի համապարփակ մոտեցում, որը միտված է բազմազանության կառավարման[2] համընդհանուր ռազմավարություն մշակելուն: Առաջին քայլերից է համարվում, սովորաբար, կա՛մ գոյություն ունեցող կառույցների գործառույթների ընդլայնումը, կա՛մ այդ

[1] https://eua.eu/downloads/publications/universities-39-strategies-and-approaches-towards-diversity-equity-and-inclusion.pdf

[2] Բազմազանության կառավարումը անհատների միջև եղած տարբերությունների (հաշմանդամությունը, սեռը, լեզուն, կրոնը, ռասան, էթնիկական ծագումը, քաղաքական հայացքները և այլն) նկատմամբ հարգանքի և նրանց կարիքներին արձագանքող գործընթաց է՝ ընդունելով անհատին այնպիսին, ինչպիսին նա կա:

գործառույթներով նոր կառույցների ստեղծումը: Օրինակ՝ կրթության ներառականության հարցերի համակարգումը կարող է վերապահվել միջազգայնացման ոլորտի համար պատասխանատու պրոռեկտորին, և (կամ) վարչական մասի գրասենյակներից մեկի գործառույթները կարող են ընդլայնվել՝ ընդգրկելով կրթության ներառականության խնդիրները, կամ էլ ձևավորվում է կրթության ներառականության հարցերով թիմ, որը բաղկացած է լինում համալսարանական համայնքի տարբեր անդամներից: Դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս գործընթացը կարող է տարբեր կերպ աշխատել տարբեր ինստիտուցիոնալ համատեքստերում:

Ընդհանուր առմամբ՝ համալսարաններում բազմազանության և ներառականության քաղաքականության իրականացումը կարող է դժվար լինել, քանի որ կառավարումը հաճախ ոչ այնքան հիերարխիկ է, որքան ավելի կոլեգիալ: Հետևապես, անգամ մեծապես ապավինելով ակադեմիական ենթակառույցների՝ կրթության և հետազոտության հարցերի շուրջ համապատասխան նպատակներ դնելու և հասնելու պատրաստակամությանը, ներառական քաղաքականության իրականացումը, որպես այդպիսին, պահանջում է առնվազն ներառականության հարցերի շուրջ պատշաճ իրազեկվածություն, ինչը սովորաբար ենթադրում է համապատասխան վերապատրաստումների կազմակերպում: Ուստի՝ հաստատութենական մակարդակում ներառական քաղաքականության իրագործման հիմնական ասպեկտներն ընդգրկում են համապատասխան աշխատանք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անհատների տարբեր խմբերի հետ, համարժեք վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում, ինչպես նաև ակադեմիական կառույցների ղեկավարների շրջանում ներառականության քաղաքականության իրագործման ընթացքը կազմակերպելու և հաշվետու լինելու հանձնառության ձևավորում:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ներառական կրթության հարցերի համակարգումն իրականացնում է Ներառական կրթության հարցերով խորհուրդը, որի կազմում ընդգրկված են՝

1. Նարեկ Անտոնյան (ռեկտորի աշխատակազմի ղեկավար),
2. Սամվել Կարաբեկյան (ռեկտորի գլխավոր խորհրդական),
3. Լիլիթ Դադայան (ռեկտորի խորհրդական ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով),

4. Անի Հակոբյան (որակի ապահովման բաժնի պետ),
5. Անի Տերտերյան (ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի ասիստենտ),
6. Լիլիթ Ազարյան (տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի գործավար, ասպիրանտ),
7. Անահիտ Հակոբյան (ուսանող):

Ներառական կրթության հարցերով խորհրդի հիմնական գործառույթներն են՝

- **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների բացահայտում.** ներբուհական վերլուծությունների հիման վրա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների նույնականացում, ինչը հնարավորություն կտա շահակիցներին հասկանալու՝ որոնք են իրենց թիրախային խմբերը, վերջիններիս՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները և իրականացվելիք քայլերը: Ուսանողական համակազմի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը պետք է սկսել ընդունելության փուլից:
- **Ներկա իրավիճակի վերլուծություն.** ուսանողական համակազմի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրելուց հետո ցանկալի է իրականացնել ներկա իրավիճակի վերլուծություն, ինչը հնարավորություն կտա հասկանալու՝ ինչ ծառայություններ են մատուցվում ուսանողներին, արդյո՞ք տրամադրվող ծառայությունները համահունչ են ուսանողների կրթական պահանջներին և առանձնահատուկ պայմանների կարիքներին, ինչպես նաև ինչ հավելյալ աջակցության ծառայություններ և քայլեր կարող են իրականացվել նրանց ուսումնական գործընթացն առավել արդյունավետ և մասնակցային դարձնելու համար:
- **Ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմների մշակում.** ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմներ կարող են լինել ուսանողների աջակցության կենտրոնի հիմնադրումը, մատչելի ենթակառուցվածքային հարմարեցումները, բյուջեի վերաբաշխումը, իրազեկվածությունը բարձրացնող վերապատրաստումների և միջոցառումների իրականացումը և այլն:
- **Դասավանդման, ուսումնառության և գնահատման ներառական մոտեցումների մշակում.** հստակ գործողությունների սահմանում՝ ուղղված

դասավանդման, ուսումնառության և գնահատման ներառական մոտեցումների ամրապնդմանը՝ հիմնված ուսումնառության համապիտանի մշակման սկզբունքների վրա: Այն կարող է ներառել ուսումնական պլանների վերանայում, քննությունների և սեմինարների համար խելամիտ հարմարեցումների ապահովում և մատչելիության ձևաչափերի մշակում ու կիրառում և այլն:

- **Որակի ապահովման քաղաքականության սահմանում,** որը պետք է ներառի հստակ սահմանված գործիքներ և մեխանիզմներ որակի ապահովման համար, որոնք կնպաստեն հաստատությունում ներառական մշակույթի ամրապնդմանն ու տարածմանը: Որակի ապահովման գործիքները կարող են ներառել հարցաթերթեր, ֆոկուս խմբային հանդիպումներ հաստատության ներքին շահակիցների հետ և այլն: Վերջիններիս արդյունքների վերլուծությունը կօժանդակի հասկանալու կրթության գործընթացի ներառականությունն ապահովելու գործում առկա բացերը և մարտահրավերները:
- **Մշտադիտարկում,** որը թույլ կտա գնահատել մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները, որոնք հատկացված են ներառական կրթության արդյունավետ կազմակերպման և իրականացման համար:

Ներառական կրթության զարգացման համատեքստում նախատեսվում է երկու ծրագրերում ընդգրկված գործողությունների իրականացում: Դրանք են՝ **վարչական, դասախոսական և օժանդակ կազմի վերապատրաստման ծրագիրը** և **ուսանողների հետ աշխատանքի ծրագիրը**:

ՎԱՐՉԱԿԱՆ, ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Վարչական, դասախոսական և օժանդակ կազմի վերապատրաստման ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- անձնակազմի վերապատրաստման դասընթացներ դասախոսների, վարչական և այլ աշխատակիցների համար՝ ուսումնառության ներառական միջավայրի և ուսանողների պահանջները լավագույնս բավարարելու եղանակների վերաբերյալ (դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներում ներառական մոտեցումների և ուսումնառության համապիտանի մշակման գործիքակազմերի կիրառում),

- կլոր սեղան քննարկումների կազմակերպում ներքին՝ վարչական, դասախոսական, ուսումնաօժանդակ կազմի, ինչպես նաև արտաքին շահակիցների հետ՝ հասարակական կազմակերպություններ, ոլորտային փորձագետներ և այլն,
- տեղական և միջազգային փորձագետների ներգրավում վերապատրաստումներին, ինչը հնարավորություն կտա անձնակազմին ծանոթանալու ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում ներառական կրթության բնագավառում ունեցած լավագույն փորձերին և քաղած դասերին:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ

Ուսանողների հետ աշխատանքի ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների նույնականացման գործընթացներ թե՛ ընդունելության ժամանակ, թե՛ ընդունելությունից հետո,
- իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների և խելամիտ հարմարեցումների կարիքների գնահատում,
- կազմակերպել անհատական հանդիպումներ և խորհրդակցություններ առանձնահատուկ ուշադրություն պահանջող ուսանողների հետ՝ ակադեմիական միջավայրում առավելագույն հաջողության հասնելու ուղիները քննարկելու նպատակով,
- իրականացնել իրազեկվածությունը բարձրացնող վերապատրաստումներ և միջոցառումներ, ապահովել խորհրդատվական և աջակցող ծառայություններ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող) ուսանողներին, անհրաժեշտության դեպքում ապահովել համապատասխան արտահամալսարանական ծառայությունների ուղեգրումը,
- կազմակերպել լրացուցիչ (արտալսարանային) պարապմունքներ և խորհրդատվություններ, վարպետաց դասեր, ոչ ֆորմալ հանդիպումներ, կարիերայի և անձնական աճի վերաբերյալ աշխատաժողովներ, հրավիրյալ դասախոսների ներգրավմամբ ամառային (ձմեռային) դպրոց և այլն: